European Bank
for Reconstruction and Development

Independent
Project
Accountability
Mechanism

**Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ**

**ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ՄԵԽԱՆԻԶՄ**

# ԴԻՄՈՒՄ. Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում

ԴԻՄՈՒՄ ԹԻՎ 2020/02

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - 2020թ.-ի օգոստոս**

թ.-ի օգոստոսի 07-ին

**Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ԾՀԱՄ) ՎԶԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմն է: Այն ստանում և քննում է Բանկի կողմից ֆինանսավորվող և, ենթադրաբար, վնաս պատճառած ծրագրերի վերաբերյալ Ծրագրի ազդակիր անձանց և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից բարձրաձայնված մտահոգությունները: ԾՀԱՄ-ը կարող է քննել դիմումները երկու գործառույթների միջոցով. Համապատասխանության ստուգման գործառույթի միջոցով, որը նպատակ ունի պարզելու, արդյոք ՎԶԵԲ-ը հետևել է իր՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը, և/կամ Հանրային տեղեկատվության քաղաքականության՝ Ծրագրի վերաբերյալ հատուկ դրույթներին, և Խնդիրների լուծման գործառույթի միջոցով, որի նպատակն է վերականգնել Դիմում ներկայացնողների և Հաճախորդի միջև երկխոսությունը Դիմումի հիմքում ընկած խնդրի (խնդիրների) լուծման նպատակով՝ առանց որևէ կողմի մեղադրելու կամ մեղքը վերագրելու: Ազդակիր Կողմերը կարող են պահանջել կիրառել այդ գործառույթներից մեկը կամ երկուսը միասին:**

**ԾՀԱՄ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմե՛ք մեզ կամ այցելե՛ք մեր կայքէջը. https://www.ebrd.com/project-finance/ipam.html**

**Կոնտակտային տվյալներ**

Հարցումները պետք է ուղարկվեն հետևյալ հասցեով՝

The Independent Project Accountability Mechanism (IPAM)
European Bank for Reconstruction and Development
One Exchange Square
London EC2A 2JN

Հեռ.+44 (0)20 7338 6000
Ֆաքս՝ +44 (0)20 7338 7633
Էլ-փոստ՝ ipam@ebrd.com

https://www.ebrd.com/project-finance/ipam.html

**Ինչպե՞ս կարող է ԾՀԱՄ-ը արձագանքել ինձ մտահոգող հարցերին:**

ՎԶԵԲ-ի գործունեության բնապահպանական և սոցիալական ասպեկտների, ինչպես նաև թափանցիկության նկատմամբ պահանջների կատարման վերաբերյալ դիմումները կարող եք ներկայացնել էլեկտրոնային փոստով, հեռախոսով, գրավոր՝ վերը նշված հասցեով, կամ լրացնելով առցանց ձևաթուղթ՝ https://www.ebrd.com/project-finance/independent-project-accountability-mechanism/how-ipam-works.html

## Ամփոփագիր

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ԾՀԱՄ) Դիմում է ստացել Հայաստանի Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Գնդեվազ և Կեչուտ բնակավայրերի համայնքների անդամներից (Դիմումատուներ) և հինգ ՔՀԿ-ներից: Դիմումատուները և ՔՀԿ-ները պնդում են, որ ՎՁԵԲ-ը չի հետևել իր՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը, և, որ տեղի բնակելի համայնքների վրա բացասաբար են անդրադարձել ՎՁԵԲ-ի բաժնետիրական ներդրումները «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ» ընկերության գործունեության մեջ, որն առնչվում է Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) - Երկարացում ծրագրին:

Դիմումատուները հայցում են, որ ԾՀԱՄ-ի կողմից իրականացվի Համապատասխանության ստուգման գործառույթը՝ պարզելու, թե արդյոք ՎՁԵԲ-ը հետևել է իր՝ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ Տեղեկատվության հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող դրույթներին:

Որպես տվյալ գնահատման մի մաս՝ ԾՀԱՄ-ի աշխատակիցները կատարել են հիմնավոր վերլուծություն՝ հասկանալու Դիմումի մեջ բարձրացված խնդիրները, քննարկելու ԾՀԱՄ-ի՝ Խնդիրների լուծման և Համապատասխանության ստուգման գործառույթները և գնահատելու Կողմերի՝ յուրաքանչյուր գործառույթին ներգրավվելու պատրաստակամությունը: ԾՀԱՄ-ի Քաղաքականության դրույթ 2.3-ի համաձայն՝ Բոլոր Կողմերի հետ ներգրավվածությունը նպատակ ուներ պարզելու, թե արդյոք գործը կարող է ընթանալ Խնդիրների լուծման գործառույթի կիրառմամբ, թե պետք է փոխանցվի Համապատասխանության գնահատման տիրույթ:

Ըստ Գնահատման հաշվետվության արդյունքների, խորհուրդ է տրվում Դիմումը փոխանցել Համապատասխանության ստուգման գործառույթին՝ ԾՀԱՄ-ի քաղաքականության դրույթ 2.6-ի համաձայն Գնահատում անցկացնելու նպատակով, ըստ Համապատասխանության ստուգման համար անհրաժեշտ սահմանված չափանիշների:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԱՄՓՈՓԱԳԻՐ** ..... **3**

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ / ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 5

**I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ** ..... 6

1. ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՆԵՐԿԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ..... 6

2. ԾՀԱՄ-ի ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ..... 6

3. ԴԻՄՈՒՄԸ ..... 7

4. ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ..... 8

*4.1. Գրանցման չափանիշները* ..... 8

*4.2. Գրանցման այլ որոշիչներ* ..... 8

**II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ** ..... 9

**III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ** ..... 10

1. Դիմումատուների տեսակետը ..... 10

2. Հաճախորդի տեսակետը ..... 11

3. ՎՁԵԲ-ի ղեկավարության տեսակետը ..... 11

**IV. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ՀԱՐՑԵՐԸ** ..... 12

**V. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** ..... 12

**VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ** ..... 13

**Հավելված 1. ԾՀԱՄ-ի՝ խնդիրների լուծման գործընթացի սխեման** ..... 14

*Եթե այլ բան նշված չէ, սույն հաշվետվության մեջ օգտագործված՝ մեծատառով գրված տերմինները նույն այն տերմիններն են, որոնք սահմանված են ԾՀԱՄ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության 2019թ.-ի ապրիլյան Քաղաքականության մեջ:*

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ / ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| ՀԱՊԽ | Համաշխարհային բանկի խմբի Միջազգային ֆինանսական կորպորացիայի Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդական/օմբուդսմեն |
| Հաճախորդ/ Ընկերություն/ Լիդիան | «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ» |
| ՔՀԿ | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| ՎԶԵԲ | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| ԲՍԳԾ | Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր |
| ԲՍԱԳ | Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲՍՔ | Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն |
| ՄՖԿ | Միջազգային ֆինանսական կորպորացիա |
| ԾՀԱՄ | Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ |
| ԾԲՔՄ | Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմ |
| Քաղաքականություն | Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականություն, որով առաջնորդվում է ԾՀԱՄ-ը |
| ԽԼ | Խնդիրների լուծման գործընթացը, որն իրականացվում է որպես ԾՀԱՄ-ի գործառույթներից մեկը |

# I. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## 1. ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՆԵՐԿԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2016թ.-ի հուլիսի 20-ին ՎԶԵԲ-ը հաստատել էր 11.4 միլիոն կանադական դոլար գումարի չափով ներդրում, որպեսզի պահպանի իր բաժնետիրությունը ցուցակված հանրային ընկերությունում, որի բաժնետոմսերի առուվաճառքն իրականացվում էր Տորոնտոյի ֆոնդային բորսայում և որը գործում է Հայաստանում: Ներդրումը տրամադրվել էր որպես մասնակցություն բաժնետրիական կապիտալին՝ «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ»-ի («**Հաճախորդ**» կամ «**Ընկերություն**») կապիտալից լրացուցիչ բաժնետոմսեր ձեռք բերելու նպատակով՝ հնարավորություն տալով Բանկին պաշտպանել առկա բաժնետոմսերը «նոսրացումից»: Այս եղանակով տրամադրված ֆինանսավորումը հատկացվել էր Ընկերության կողմից ձեռնարկված՝ Բնապահպանական և սոցիալական ազդեցության մեղմման միջոցառումների (ESMM) ֆինանսավորմանը՝ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման հետ կապված Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ) առնչությամբ:[1] Ընկերության կապիտալում ներդրումը համալրում է Բանկի ավելի վաղ ներգրավվածությունը Ծրագրի հետազոտման և մշակման փուլում:

Ընկերությունն իր վարկատուների հետ ուներ պարտքի մարումը պարտադրելու օրինական իրավունքի կիրառումից զերծ մնալու մասին համաձայնություն, որը չէր երկարացվել 2019 թվականի դեկտեմբերին, և արդյունքում Ընկերությունը դիմել և ստացել էր Պաշտպանության կարգադրություն Կանադայում, ինչը թույլ տվեց նրան վերակազմավորել իր բիզնեսն ու ֆինանսական գործունեությունը: Անվճարունակության վարույթի շրջանակներում ընդունվեց կորպորատիվ վերակազմավորման պլան, որի արդյունքում ակտիվներն այժմ պատկանում են Ընկերության առկա ավագ ապահովված վարկատուներին «Լիդիան Կանադայում», «Լիդիան Մեծ Բրիտանիայում» և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ում և և վերահսկվում նրանց կողմից, իսկ «Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ» ընկերության փակման գործը Ջերսիի իրավասու դատարանում է: Սույն հաշվետվության հրապարակման պահի դրությամբ դատավարությունը դեռ ընթացքի մեջ է, և դրա ավարտը կհանգեցնի Հաճախորդի ընկերությունում ՎԶԵԲ-ի բաժնետիրական մասնակցության դադարեցմանը:

## 2. ԾՀԱՄ-ի ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՎԶԵԲ-ի Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմը (ԾՀԱՄ) քննում է Անհատների կամ Կազմակերպությունների կողմից բարձրաձայնված խնդիրները այն Ծրագրերի վերաբերյալ, որոնք ֆինանսավորվում են Բանկի կողմից և, ենթադրաբար, վնաս են պատճառել կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել: Այս գործընթացի սկզբում և Դիմումը գրանցելուց հետո, ԾՀԱՄ-ը իրականացնում է գնահատում[2] հետևյալ նպատակներով.

- հստակ պատկերացում կազմել բարձրացված խնդիրների մասին,

[1] Ծրագրի ամփոփ փաստաթղթին կարող եք ծանոթանալ այստեղ. https://www.ebrd.com/work-with-us/projects/psd/lydian-amulsar-gold-mine-extension.html

[2] Գնահատումը իրականացվում է Քաղաքականության դրույթ 2.3-ին համապատասխան:

- Կողմերի հետ քննարկել Խնդիրների լուծման և Համապատասխանության ստուգման գործառույթները, դրանց շրջանակը և հնարավոր արդյունքները,
- գնահատել Կողմերի պատրաստակամությունը՝ ներգրավվելու վերը նշված գործառույթներից յուրաքանչյուրում՝ հաշվի առնելով տվյալ գործառույթների առումով Դիմումատուների նախապատվությունը,
- հաշվի առնել բողոքների լուծման այլ միջոցառումների ներկա կարգավիճակը, եթե կիրառելի է,
- որոշել, արդյոք Գործը կփոխանցվի Համապատասխանության գնահատման, եթե Խնդիրների լուծման գործառույթի կիրառման վերաբերյալ որևէ պայմանավորվածություն ձեռք չի բերվել:

Սույն Գնահատման հաշվետվությունը ներկայացնում է Գնահատման փուլի արդյունքը և ներառում գործընթացի ընթացքում բացահայտած տվյալները: Հաշվետվության բովանդակությունը տրամադրվում է Դիմումատուներին, Հաճախորդին և Բանկի ղեկավարությանը և այնուհետև հրապարակվում ԾՀԱՄ-ի Գործերի Գրանցամատյանում:

## 3. ԴԻՄՈՒՄԸ

2020թ.-ի մայիսի 19-ին ստացել ենք Դիմում[3] , որը կապված էր Լիդիան (Ամուլսարի ոսկու հանք) – Երկարացում Ծրագրի հետ: Դիմումը համատեղ ներկայացվել և ստորագրվել է տեղացի քսաներեք բնակիչների, տարածաշրջանային ՔՀԿ՝ *CEE Bankwatch Network* -ի, և տեղական չորս ՔՀԿ-ների կողմից: (i) «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, (ii) «Հայաստանի անտառներ» ՀԿ, (iii) «Կանաչ Հայաստան» ՀԿ և (iv) «Հայկական բնապահպանական ճակատ» քաղաքացիական նախաձեռնություն:

Դիմումատուները պնդում են, որ Բանկը չի հետևել իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը և տեղեկությունների հանրայնացման պահանջներին: Ստորև ամփոփում ենք Դիմումատուների և ՔՀԿ-ների կողմից առաջ բերված մտահոգությունները.

- Գործունեության նկատմամբ պահանջ 1. Էկոլոգիական և սոցիալական ազդեցության և խնդիրների գնահատում և կառավարում. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկի 5 բնակավայրերի ջրի, օդի, հողի, վայրի բնության, համայնքի առողջության և կենսապահովման վրա,
- Գործունեության նկատմամբ պահանջ 3. Ռեսուրսաարդյունավետություն, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և վերահսկողություն. Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրն առաջացրել է օդի աղտոտում փոշով և ազդել ջրամատակարարման վրա, ինչը նպաստել է խմելու և ոռոգման ջրի, ինչպես նաև Գնդեվազի ձկնաբուծարանների աղտոտմանը,
- Գործունեության նկատմամբ պահանջ 4: Առողջապահություն և անվտանգություն - Դիմումատուները պնդում են, որ ուրանի առկայության հետևանքով աղտոտումը և ծրագրի վայրից արտանետվող փոշին կարող են ազդել բնակիչների առողջության վրա,

[3] Դիմումը ստացել է ԾՀԱՄ-ին նախորդող կազմակերպությունը՝ Ծրագրերի հետ կապված բողոքների քննության մեխանիզմը (ԾԲՔՄ), որի գործառույթները նման էին ԾՀԱՄ-ի գործառույթներին: Քանի որ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ԾԲՔՄ-ն փաստացի վերակազմավորվել և դարձել էր ԾՀԱՄ, ԾՀԱՄ-ը ընթացք կտա Դիմումին, որը ներկայացվել էր նախքան այս վերակազմավորումը՝ ԾՀԱՄ-ի Քաղաքականության Բաժին V-ի համաձայն:

- Գործունեության նկատմամբ պահանջ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը, հավանաբար, ազդել է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ-IUCN) կարմիրգրքյան տեսակների և Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող տեսակների վրա[4] ,
- Գործունեության նկատմամբ պահանջ 8. Մշակութային ժառանգություն - Դիմումատուները պնդում են, որ Ծրագիրը բացասաբար է անդրադարձել Ջերմուկ քաղաքի մշակութային և պատմական ժառանգության վրա՝ դրանով իսկ վնասելով քաղաքի հեղինակությանը որպես հայտնի առողջարանային կենտրոն, և վերջինը.
- Գործունեության նկատմամբ պահանջ 10. Տեղեկությունների հանրայնացում և շահագրգիռ կողմերի հետ համագործակցություն - Դիմումատուները պնդում են, որ տեղական ՇՄԱԳ գործընթացի շրջանակում իրականացվող հանրային քննարկումների ընթացքում Ջերմուկի համայնքի հետ խորհրդակցություններ չեն անցկացվել:

Դիմումի մեջ պահանջվում է, որ այս Գործի նկատմամբ կիրառվի ԾՀԱՄ-ի՝ Համապատասխանության ստուգման գործառույթը:

## 4. ԴԻՄՈՒՄԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Դիմումը գրանցվել է 2020թ.-ի հունիսի 12-ին, համաձայն ԾԲՔՄ-ի՝ 2014թ. Կանոնների և Ընթացակարգերի դրույթներ 11-14-ի: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ ԾՀԱՄ-ը գործողության մեջ է մտել 2020 թվականի հուլիսի 1-ից՝ Դիմումը ընթացք է ստացել այդ օրվանից, համաձայն ԾՀԱՄ-ի՝ 2019թ.-ի Քաղաքականության:

### 4.1. Գրանցման չափանիշները

Գնահատման փուլում Դիմումը ստուգվել է՝ համոզվելու համար, որ այն համապատասխանում է նաև 2019թ.-ի Քաղաքականության մեջ նշված՝ Գրանցման բոլոր չափանիշներին: Այս գործընթացի արդյունքում հաստատվեց, որ՝

i. տրամադրվել են բոլոր պարտադիր տեղեկությունները,
ii. Դիմումը բարձրացնում է այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են Բնապահպանական և սոցիալական քաղաքականության ներքո Բանկի կոնկրետ պարտավորություններին,
iii. Դիմումը վերաբերում է մի Ծրագրի, որը հաստատվել է, և Դիմումը ներկայացվել է 24 ամսվա ընթացքում այն ամսաթվից հետո, երբ Բանկը դադարել է Ծրագրում ֆինանսական հետաքրքրություն ունենալ,
iv. գրանցումը կանխող բացառություններից ոչ մեկը կիրառելի չէ:

### 4.2. Գրանցման այլ որոշիչներ

Ներկա Դիմումը հաջորդում է երկու նախկին բողոքների, որոնք ԾԲՔՄ էին ներկայացվել 2014 թվականին[5]՝ բարձրաձայնելով նմանատիպ բնույթի մտահոգություններ: Այդ ժամանակ կատարված՝ գրանցման չափանիշների գնահատման շրջանակներում պարզ

[4] Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանման մասին Բեռնի կոնվենցիան ստորագրվել է 1979 թվականի սեպտեմբերի 19-ին և ուժի մեջ է 1982 թվականի հունիսի 1-ից:
[5] Դիմումները գրանցվել են թիվ 2014/02 և 2014/03 գործերի ներքո, որոնք հետագայում միասին են գնահատվել:

դարձավ, որ գործը չէր համապատասխանում ո՛չ Խնդիրների լուծման, և ո՛չ էլ Համապատասխանության ստուգման համար գրանցման չափանիշներին: Վերոնշյալ եզրակացությունն արվել էր այն ենթադրության հիման վրա, որ այդ ժամանակ ՎՁԵԲ-ի ֆինանսավորումը կենտրոնանում էր բացառապես հետազոտման և ծրագրի նախապատրաստման աշխատանքների վրա, մինչդեռ Բողոք ներկայացնողները պնդում էին Ընկերության կողմից առաջարկվող՝ ոսկու հանքարդյունահանման գործունեության հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մասին, իսկ ՎՁԵԲ-ն այդ ժամանակ դրանում դերակատարություն չուներ:

2014թ.-ի ապրիլի 16-ին երկու առանձին բողոք ներկայացվեց նաև Համաշխարհային բանկի խմբի Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականին/օմբուդսմենին (ՀԱՊԽ)՝ բարձրացնելով, ըստ էության, նմանատիպ մտահոգություններ ինչպես ԾԲՔՄ-ի կողմից ստացված բողոքներում: 2014 թվականի դեկտեմբերին ՀԱՊԽ-ը համարեց, որ այդ բողոքները համապատասխանում են հետագա գնահատման չափանիշներին, և դրանք համախմբեց մեկ գործի մեջ՝ համապատասխանության ապահովման հետաքննություն անցկացնելու նպատակով, իսկ 2017 թվականի օգոստոսին թողարկվեց Համապատասխանության ապահովման ստուգման մասին հաշվետվությունը: Գործը վերջնականապես փակվեց 2018թ.-ի հոկտեմբերին, քանի որ ՄՖԿ-ն չուներ այդ ընկերությունում որևէ ընթացիկ ներդրում և ուներ որոշում՝ չմասնակցել ծրագրի մակարդակում որևէ պատասխան գործողությունների իր նախկին հաճախորդի կամ բողոք ներկայացնողների հետ[6].

ԾՀԱՄ-ը վերլուծել է այս գործընթացներից յուրաքանչյուրի կարգավիճակը և որոշում կայացրել, որ ընթացիկ Դիմումի մշակումը չի կրկնօրինակում այլ գործընթացներ կամ խանգարում դրանց, և որևէ այլ գործընթաց չի խոչընդոտում Դիմումի ընթացքը:

## II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ

Գործը գրանցելուց հետո և Քաղաքականության 2.3 դրույթի համաձայն ԾՀԱՄ-ն իրականացրել է Դիմումի ընդհանուր գնահատում, ինչպես նաև ուսումնասիրել Դիմումատուների, ՔՀԿ-ների, ՎՁԵԲ-ի աշխատակիցների և Հաճախորդի կողմից տրամադրված լրացուցիչ փաստաթղթերն ու տեղեկությունները: Գնահատման մեթոդաբանությունը նպատակ ուներ հստակ պատկերացում կազմելու Դիմումում ներկայացված հարցերի վերաբերյալ, բավարար կերպով պարզաբանելու ԾՀԱՄ-ի՝ Խնդիրների լուծման և Համապատասխանության ստուգման գործառույթների շրջանակն ու հնարավոր արդյունքները և ամենակարևորը՝ գնահատելու Կողմերի պատրաստակամությունը դրանց մեջ ներգրավվելու առումով:

COVID-19-ով պայմանավորված առողջապահական ճգնաժամի և ՎՁԵԲ-ի աշխատակիցների ճանապարհորդությունների ժամանակավոր արգելքի պատճառով հնարավոր չէր իրականացնել տեղայց: Փոխարենը, 2020 թվականի հունիսից հուլիս ընկած ժամանակահատվածում անցկացվեցին մի շարք վիրտուալ հանդիպումներ

[6]Ներկայացված բողոքների և Համապատասխանության ապահովման ստուգման վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք ՀԱՊԽ-ի Գործերի Գրանցամատյանը

Դիմումատուների, ՔՀԿ ներկայացուցիչների, Հաճախորդի և Բանկի աշխատակիցների հետ:

Դիմումատուների և ՔՀԿ-ների հետ 2020-ի հուլիսի 21-ին հրավիրված խորհրդակցություններին ներկա էին Դիմումը ստորագրած կողմերը, Ծրագրի ազդակիր համայնքներից դիտորդները և Դիմումը ստորագրած 5 ՔՀԿ-ների ներկայացուցիչները: Խորհրդակցությունների նպատակները հետևյալն էին.

- Հասկանալ, թե Դիմումատուներն ու ՔՀԿ-ները ընդհանուր առմամբ ինչ փորձ են ունեցել Լիդիանի գործունեության հետ կապված,
- Ընդհանուր առմամբ ուսումնասիրել Դիմումատուների և ՔՀԿ-ների հիմնական կարիքներն ու հետաքրքրությունները և դիտարկել հաշվեհարդարի ցանկացած պոտենցիալ ռիսկերը,
- Պարզաբանել, թե ինչ արդյունքների կարող են հասնել կամ չեն կարող հասնել ԾՀԱՄ-ի՝ Խնդիրների լուծման և Համապատասխանության ստուգման գործառույթները՝ Կողմերի ակնկալիքները ճշգրտելու նպատակով, և
- Հարցում անել, արդյոք Դիմումատուների տեսակետից Խնդիրների լուծման գործառույթը կարող է օգտակար լինել (թե ոչ) և գնահատել, արդյոք Դիմումատուները ցանկանում են Հաճախորդի հետ կառուցողական երկխոսություն վարել:

Բացի այդ, հրավիրվել են առցանց հանդիպումներ Հաճախորդի հետ, որպեսզի ԾՀԱՄ-ն ավելի լավ հասկանա բարձրացված խնդիրների վերաբերյալ Ընկերության տեսակետը, բացատրի ԾՀԱՄ-ի գործառույթներն ու ընթացակարգերը և պարզի, արդյոք կա Խնդիրների լուծման գործընթացին ներգրավվելու պատրաստակամություն:

## III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՈՂՄԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

### 1. Դիմումատուների տեսակետը

Դիմումատուների հետ խորացված խորհրդակցությունների ընթացքում պարզ դարձավ իրենց խիստ հետաքրքրությունը ԾՀԱՄ-ի՝ Համապատասխանության ստուգման գործառույթը կիրառելու նկատմաբ: Դիմումատուները շեշտեցին, որ առ այսօր Հաճախորդի հետ երկխոսություն վարելու ջանքերն, իրենց կարծիքով, ապարդյուն են եղել: Բացի այդ, վստահության պակասը՝ զուգորդված Կողմերի միջև չկատարված պայմանավորվածությունների հետ, ընկալվում է որպես խոչընդոտ Խնդիրների լուծման գործառույթը հետագայում դիտարկելու համար: Հաշվի առնելով մինչ այժմ տեղի ունեցած բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, որոնց մասին պնդում են Դիմումատուները՝ վերջիններս շեշտեցին, որ միակ մոտեցումը, որը նրանք այս փուլում պատշաճ են համարում, այն է, որ ԾՀԱՄ-ի կողմից իրականացվի Համապատասխանության ստուգում: Նրանց կարծիքով կարևոր է պահանջել, որ լուծվի շրջակա միջավայրի և համայնքների վրա (անցյալի և ներկայիս) ենթադրաբար ներգործած ազդեցությունների համար պատասխանատվության հարցը, և դա կարելի է անել միայն իրականացնելով Համապատասխանության ստուգման գործընթացը: Բացի այդ, նրանք հիշատակեցին, որ Հաճախորդի ընկերության կառուցվածքում վերջերս տեղի ունեցած փոփոխություններով և հետագա գործառույթների վերաբերյալ հստակության

բացակայությամբ պայմանավորված ուժգնացող լարվածությունը այս պահին թույլ չի տա կառուցողական երկխոսություն վարել:

Քննարկումների ընթացքում Դիմումատուները նաև ներկայացրեցին ԾՀԱՄ գործընթացի հետ կապված իրենց ակնկալիքները և թվարկեցին հետևյալ սպասվող արդյունքները.

- Ջերմուկի շրջակա միջավայրի և սոցիալական իրավիճակի բարելավում,
- Կենսապահովման միջոցների և զբոսաշրջության զարգացման վերականգնում,
- Առողջ, մաքուր և անվտանգ միջավայրի ապահովում,
- Ողջ Համայնքի համար կարևոր հարցերում շահագրգիռ կողմերի ներգրավում,
- Ծրագրի փակում:

## 2. Հաճախորդի տեսակետը

Հաճախորդի հետ հանդիպումների ընթացքում պարզ դարձավ իրենց պատրաստակամությունը մասնակցելու Խնդիրների լուծման գործառույթին՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկումներն առաջ տանելու և խնդիրները լուծելու մտադրությամբ: Նրանք կարծում են, որ այժմ, երբ ընկերությունն ունի նոր կառուցվածք, Խնդիրների լուծման գործընթացում ներգրավվածությունը Հաճախորդին հնարավորություն կտա Դիմումատուների հետ քննարկել և համաձայնեցնել փոխադարձ ընդունելի հետագա քայլերը:

## 3. ՎԶԵԲ-ի ղեկավարության տեսակետը

Ղեկավարությունը նշել է, որ Լիդիանը ՎԶԵԲ-ի երկարաժամկետ հաճախորդն է, և որ ծրագրին վերաբերող համատեղ գործողությունները ներառում էին հետևյալը.

- Ցինկի, կապարի, արծաթի և ոսկու հանքավայրերի ուսումնասիրություն և զարգացում Արևմտյան Բալկաններում, որտեղ ՎԶԵԲ-ի աջակցությունն իրենից ներկայացնում էր մասնակցություն Ծրագրի ընկերության բաժնետիրական կապիտալին (2009 թ.փետրվար):
- Աջակցություն Հայաստանում Լիդիանի՝ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի ուսումնասիրությանը և մշակմանը (հորատում և իրագործելիության ուսումնասիրություններ)՝ ընկերության բաժնետիրական կապիտալին մասնակցության միջոցով (2009 թ. մայիս):
- աջակցություն Լիդիանի՝ Ամուլսարի ոսկու հանքի նախագծի զարգացման ծրագրին (արտադրության մեկնարկ)՝Ծրագրի բաժնետիրական կապիտալին ՎԶԵԲ-ի մասնակցության միջոցով (2016 թ. հուլիս),
- Բանկը նշել է, որ Ծրագրի վերաբերյալ իրականացվել է շրջակա միջավայրի և սոցիալական ուսումնաիրություն և Դիմումում ներկայացված խնդիրները պատշաճ կերպով հասցեագրված են Ընկերության կողմից:

Բանկը շեշտել է, որ իր մասնակցությունը վարկավորման տեսքով չէր և սահմանափակվում էր միայն բաժնետիրական գործառույթով, ընդ որում բաժնետիրական կապիտալին մասնակցությունը երբեք չի գերազանցել 5%-ը: Բացի այդ, հանդիպումների ընթացքում նշվել է, որ Ընկերությունը, Lydian Canada Ventures Corporation-ի և Lydian UK Corporation Limited-ի հետ միասին, 2020թ.-ի հունիս ամսին Օնտարիոյի Գերագույն դատարանից ստացել են Պատժամիջոցների և Իրականացման

Կարգադրություն, որը հաստատում է ընկերության պայմանավորվածության պլանը իր ապահովված պարտատերերի հետ՝ որպես 2019 թվականի դեկտեմբերին հարուցված սնանկության ընթացակարգի մի մաս: Վերոնշյալ Կարգադրության համաձայն և դրա՝ ուժի մեջ մտնելու պահից ՎՁԵԲ-ն այլևս չի համարվում Ընկերության բաժնետեր և ՎՁԵԲ-ի բաժնետիրությունը ենթակա է դադարեցման, ինչը ներկայումս քննվում է Ջերսիի դատարանում: Ծրագիրն այժմ պատկանում է «Lydian Canada Ventures»- ին, որում ՎՁԵԲ-ը ֆինանսական հետաքրքրություն չունի:

ՎՁԵԲ-ի ղեկավարությունը նշել է, որ, հաշվի առնելով ֆինանսական հետաքրքրության բացակայությունը և չունենալով Ծրագրում որևէ իրավական կարգավիճակ, Բանկը չի կարող օժանդակել թե՛ Խնդիրների լուծման և թե՛ Համապատասխանության ստուգման գործառույթին կամ դրանց համապատասխան արդյունքների կատարման հետագա մոնիտորինգին: Այնուամենայնիվ, նրանք նշեցին, որ կսատարեն ԾՀԱՄ-ի եզրակացություններին և կդյուրացնեն գործընթացի հաջորդ քայլերը՝ լրացուցիչ փաստաթղթեր տրամադրելով ըստ պահանջի:

## IV. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ՀԱՐՑԵՐԸ

Ինչպես սահմանված է դրույթ 3.1 k)-ում՝ «ԾՀԱՄ-ն ունի զրոյական հանդուրժողականության քաղաքականություն ԾՀԱՄ գործընթացում կամ իրագեկման գործունեության մեջ ներգրավված Դիմումատուների կամ ցանկացած այլ անձանց դեմ հաշվեհարդարի նկատմամբ և մերժում է վերջինների հանդեպ՝ նրանց մտահոգությունները հնչեցնելու իրավունքի կիրառման հետևանքով սպառնալիքի, ահաբեկման, ոտնձգությունների, բռնությունների կամ խտրականության ցանկացած ձև»:

Գնահատման փուլում ՔՀԿ-ները տեղեկացրեցին ԾՀԱՄ-ին ծրագրի տարածքում վերջերս տեղի ունեցած բռնությունների դրվագների մասին: Ռիսկերի գնահատման իր ընթացակարգերին համահունչ, ԾՀԱՄ-ը հարցրել է Դիմումատուներին, արդյոք նրանք ունեն հաշվեհարդարի հետ կապված որևէ կոնկրետ մտավախություն, ինչին նրանք պատասխանել են, որ ներկայումս չունեն: Հետևաբար, ներկայումս այս կապակցությամբ ոչ մի միջոցառում չի իրականացվում, սակայն ԾՀԱՄ-ը պարբերաբար կուսումնասիրի իրավիճակը՝ ապահովելու, որ անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցներ սահմանվեն:

## V. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԾՀԱՄ քաղաքականության դրույթ 2.3-ի համաձայն Մեխանիզմն ուսումնասիրել է Դիմումը և որոշել.

- Խնդիրների լուծման գործառույթը սահմանափակ ներուժ ունի կառուցողական երկխոսության և դրական արդյունքի հասնելու համար՝ Կողմերի միջև անվստահության պատճառով և հաշվի առնելով վերջիններիս միջև պայմանավորվածությունների մի շարք խախտումները,
- Չկան նշաններ, որ Կողմերը կարող են պահպանել անվտանգ միջավայր բովանդակալից երկխոսություն վարելու համար,

- Կողմերի սկզբունքները անհամատեղելիորեն տարբերվում են, և դա հնարավոր չի լինի լուծել Խնդիրների լուծման գործընթացի ընթացքում:

## VI. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Գնահատման արդյունքների հիման վրա և Քաղաքականության դրույթ 2.3. ա)-ի v)-րդ կետի բ) տառի համաձայն որոշում է կայացվում, որ Դիմումը կփոխանցվի Համապատասխանության գնահատում իրականացնելու համար, քանի որ Խնդիրների լուծման գործառույթը կիրառելու հետ կապված որևէ համաձայնություն ձեռք չի բերվել, և Դիմումատուները հետաքրքրված են, որ իրենց Դիմումը փոխանցվի Համապատասխանության ստուգման գործառույթին:

ԾՀԱՄ-ի Քաղաքականության համաձայն, սույն Գնահատման հաշվետվությունը պետք է ներկայացվի Բանկի Խորհրդին և Նախագահին՝ ի գիտություն, և միաժամանակ տրամադրվի Դիմումատուներին, Բանկի ղեկավարությանը և Հաճախորդին: Հաշվետվությունը կհրապարակվի նաև ԾՀԱՄ-ի Գործերի Գրանցամատյանում՝անգլերենով և հայերենով:

## Հավելված 1. ԾՀԱՄ-ի՝ Խնդիրների լուծման գործընթացի սխեման

# ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

European Bank for Reconstruction and Development

Independent Project Accountability Mechanism

**Խնդիրների լուծումը ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի (ԾՀԱՄ) կողմից տրամադրվող 2 գործառույթներից մեկն է:** Այն նպատակ ունի նպաստել Կողմերի միջև երկխոսությանը՝ լուծելու Դիմումի մեջ բարձրացված հարցերը չեզոք փորձագետի օգնությամբ:

Խնդրում ենք ծանոթանալ ստորև ներկայացված աղյուսակին՝ հասկանալու համար, թե ինչ կարող եք ակնկալել:

## ՓՈՒԼ 1:

**Խնդիրների լուծման գործառույթն օգտագործելու համաձայնություն. գործառույթի շրջանակը, նախընտրելի մեթոդները, սկզբունքներն ու մոտավոր ժամանակացույցը:**

Եթե Դուք և մյուս Կողմը համաձայնել եք օգտագործել Խնդիրների լուծման գործառույթը, ԾՀԱՄ-ը Ձեզ հետ կապ կհաստատի՝ քննարկելու գործընթացի կառուցվածքն ու շրջանակը, ինչպես նաև գործընթացը դյուրացնելու նպատակով ներգրավված՝ չեզոք փորձագետից Ձեր ակնկալիքները:

## ՓՈՒԼ 2:

**Մյուս Կողմի հետ Խնդիրների լուծման հիմնական կանոնների և գաղտնիության վերաբերյալ շրջանակային համաձայնագրի ստորագրումը:**

Խնդիրների լուծման գործընթացի սկզբում Ձեզանից և մյուս Կողմից կպահանջվի շրջանակային համաձայնագիր ստորագրել: Շրջանակային համաձայնագրում հստակեցվում է, թե ինչպես է անցկացվելու գործընթացը և որոնք են կիրառվող հիմնական կանոնները:

## ՓՈՒԼ 3:

**ԾՀԱՄ-ը կաջակցի այդ գործընթացին՝ նշանակելով արտաքին չեզոք փորձագետ՝ Ձեր և մյուս Կողմի միջև երկխոսությունը դյուրացնելու նպատակով:**

Չեզոք փորձագետը միայն դյուրացնում է Կողմերի միջև երկխոսությունը՝ առանց խորհուրդներ տալու կամ որոշում պարտադրելու:
Փորձագետը պետք է գործի անկողմնակալ կերպով՝ հարգելով գործընթացի գաղտնիությունը և չմեղադրելով կամ մեղքը չվերագրելով Կողմերից որևէ մեկին:

## ՓՈՒԼ 4:

**Խնդիրների լուծման ընթացքում կանցկացվեն մի շարք համատեղ կամ երկկողմ հանդիպումներ՝ Կողմերի դիրքորոշումներն ու շահերը հստակեցնելու և այլընտրանքային լուծումներ փնտրելու նպատակով:**

Գործընթացի ժամանակ ակնկալվում է Ձեր ակտիվ ներգրավվածությունը: Խնդիրների լուծման գործընթացի փորձագետը կլսի, թե որն է Ձեր հիմնական հետաքրքրությունը, և կապահովի, որ ներկայացված տեղեկություններն ու փաստերը հասկանալի լինեն բոլորի համար, որպեսզի օգնի այլընտրանքային լուծումներ գտնել:

## ՓՈՒԼ 5:

**Գործընթացի ընթացքում քննարկված որոշ կամ բոլոր հարցերի շուրջ մյուս Կողմի հետ համաձայնության ձեռք բերում:**

Համաձայնություն ձեռք բերելու հարցը ամբողջովին կախված է Կողմերից: Ոչ ԾՀԱՄ-ը, և ոչ էլ փորձագետը լուծում չեն պարտադրի: Հիշեցնում ենք, որ այս գործընթացը կամավոր է և, հնարավոր է, ավարտվի առանց որևէ համաձայնություն ձեռք բերելու:

## ՓՈՒԼ 6:

**Եթե դուք համաձայնության գաք մյուս Կողմի հետ, ԾՀԱՄ-ը կվերահսկի դրա իրականացումը:**

ԾՀԱՄ-ը մոնիտորինգի հաշվետվություններ կպատրաստի տարեկան առնվազն երկու անգամ և դրանք կհրապարակի մեր՝ Դեպքերի վիրտուալ մատյանում:

**Դեպքը կփակվի այն բանից հետո, երբ ԾՀԱՄ-ը եզրակացնի, որ համաձայնագիրը ամբողջությամբ կատարվել է:**

ԾՀԱՄ-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք մեր կայքը https://www.ebrd.com/project-finance/ipam.html Կարող եք նաև մեզ հետ կապ հաստատել էլ.փոստով՝ **ipam@ebrd.com** , կամ նամակ ուղարկել փոստով ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին, Հաշվետվողականության Գլխավոր Գրասենյակ, Վիկտորիա Մարկես-Մեեսին, Attn: Victoria Marquez-Mees, Chief Accountability Officer, One Exchange Square, London EC2A 2JN. United Kingdom